



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՅԱՏԿԱՑՈՒՄ՝ ԱԶԳ. ՄԱՐԻ ՓՈՍՏՈՅԵԱՆ ՄԱՆԿԱՄԱՍՈՒՐԻՆ Ի ՅԻՇԱՏԱԿ ՉՈՒԱՐԹ ԵՏԱԼԵԱՆԻ

Գոհունակութեամբ կը յայտարարենք, որ վերջերս, Յոլիվուտի «Ազգային Մարի Փոստոյեան» մանկամտուրը ունեցաւ նկատառելի բարերարութիւն մը, շնորհիւ երիտասարդ իրաւաբան Շանթ Ետալեանի:

Արդարեւ, Շանթ Ետալեան դատական հարցի մը ճամբով ապահոված էր աւելի քան 104,500 տոլար: Ան ներկայացաւ Ազգային Առաջնորդարան եւ յայտնեց, թէ դատական հարցի մը վերաբերող, ու դատարանին կողմէ տրուած վճիռի մը հիմամբ, որոշուած է ճշդուած գումարը տրամադրել բարեսիրական նպատակի: Արդ, Շանթ Ետալեան որոշած է ապահովուած այդ գումարով, ի յիշատակ իր հանգուցեալ մօր՝ Չուարթ Ետալեանի, մանկամտուրին համար հաստատել հիմնադրամ մը, որուն հասոյթը պիտի տրամադրուի սաներու:

Առաջնորդ Սրբազանը, Ազգ. Վարչութիւնն ու Ազգ. Վարժարաններու հնամակալ Մարմինը գնահատանք արտայայտեցին այս օրինակելի ու սրտաբուխ նուիրաբերումին համար:

SCHOLARSHIP FUND ESTABLISHED AT MARY POSTOIAN PRE-SCHOOL IN MEMORY OF ZEVART YEDALIAN

We are pleased to announce that ARS "Mayr" Chapter Mary Postoian Pre-School in Hollywood recently received a considerable donation courtesy of young attorney Shant Yedalian.

Mr. Yedalian recently represented a class action lawsuit brought forth against a commercial establishment. A judgment was awarded in favor of the plaintiff. After consulting with the court, Mr. Yedalian decided to donate the sum of \$104,500 to a charitable cause.

Mr. Yedalian kept the Prelacy abreast of the situation and expressed his desire to donate the funds to ARS "Mayr" Chapter Mary Postoian Pre-School to establish a scholarship fund in memory of his late mother Zevart Yedalian.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Executive Council and the Board of Regents highly commend Mr. Yedalian's thoughtful gesture and generosity.

